

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան փոստով տեսակցել է Վաղարշապատի համալսարանի ղեկավարին՝ Բագրատ Եսայեանին (1965 թ. ծնունդ) մասնագիտությունը պատմաբան է, աւարտած է Երևանի Պետական համալսարանը: 1991-ից 1994 եղած է Հ. Յ. Դ. Հայաստանի Կեդրոնական կոմիտեի գրասենյակի պատասխանատու: 1998-ից 1999 վարած է Հայաստանի նախագահի խորհրդակցական աշխատակազմի ղեկավարի պաշտոնը: Վերջին շրջանին փոստով տեսակցել է Վաղարշապատի ղեկավարին՝ Բագրատ Եսայեանին: Գ. Գ. Կ.:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏ

Կառավարութիւնը երէկ գումարեց իր ընթացիկ նիստը՝ Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ, գլխավորութեամբ նախագահ զօր. Էմիլ Լաւոնտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի:

Ժողովին բացակայեցան 10 նախարարներ՝ փոխ վարչապետ Իսամ Ֆարէս, Մարուան Համատէ, Ասատ Հարոն, Ֆարէս Պուէյզ, Թալալ Արսլան, Սլէյման Ֆրենտիէ, Միշէլ Սրմաճա, Ժան Օպէյտ, Նեփոլ Կարթալի եւ Ղազար Արիսի:

Ժողովին քննարկումի առարկայ դարձան Հարաւային Լիբանանի մէջ իսրայէլեան ոտնձգութիւնները եւ այդ գծով ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին յղուած բողոքագրերը:

Կառավարութիւնը վարչական բարեկարգումի նախարար Բագրատ Եսայեանին լիազօրեց քաղաքացիական ծառայութեան խորհուրդին հետ գործակցաբար աշխատելու եւ պատրաստելու օրէնքի ծրագիր մը, որ կ'առնչուի պետական հաստատութիւններու մէջ մեծ թիւով պաշտօնեաներու հարցի լուծման:

Ժողովը յետաձգեց փոխարկութեան միջոցներու եւ բարգաւաճման թղթածրարի քննարկումը, որովհետեւ ճամբորդութեան պատճառով հանրագումար չի կատարուած փոխարկութեան հարցերու նախարար Նեփոլ Կարթալի կը բացակայէր ժողովին:

Ժողովին որոշումները յայտարարեց պաշտպանութեան նախարար Մահմուտ Համուտ, որ լրագրողներու հարցումներուն պատասխանելով ըսաւ, թէ կառավարութիւնը Պապատա-Ալէյի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն թղթածրարը չքննարկեց:

ԻՍՐԱՅԵԼ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՈՐՈՇԵՑ ԱՐՏԱՔՍԵԼ ԱՐԱՖԱԹԸ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսայեանը Արաֆաթը պորավիզ կանգնողները պաղեստինցի ղեկավարին դէմ որոշումէ մը, որ կրնայ աղէտալի հետեւանք ունենայ:

Չգուշացումի հրաւերը կ'ուղղուէր այն պահուն, երբ Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շարոն կ'ըսէր, թէ իսրայէլացի նախարարներու մեծ մասը համաձայն է, որ Արաֆաթի դէմ արտաքսումի որոշում տրուի: Ալէյի ուշ, իսրայէլեան կառավարութիւնը որոշեց արտաքսել Արաֆաթը, «որ քառու մըն է Իսրայէլի համար»: Կառավարութիւնը կանաչ լոյս տուաւ բանակին՝ յարմար պահուն արտաքսելու պաղեստինցի ղեկավարը:

Միացեալ Նախագահ

ներէս պաղեստինցիներէն Արիէլ Շարոնի կառավարութիւնը Արաֆաթը արտաքսելու որոշումէ մը, մինչ Եսայեանի Միտրիին, այլ դէմ կը կանգնէր, յայտարարելով, որ Արաֆաթ պաղեստինցիներուն կողմէ ընտրուած ղեկավար մըն է պաղեստինցի ղեկավարը արտաքսելու:

Արաֆաթի գլխաւոր խորհրդատու Նապիլ Մաու Ռուտայա ըսաւ, որ պաղեստինցի ղեկավարը արտաքսելու

իսրայէլեան որեւէ փորձ պօրաւոր հարւած մը պիտի տայ խաղաղութեան գործընթացին եւ միջապալին խաղաղարար ճիգերուն: Այսու Ռուտայան աւելցուց, որ եթէ միջապալին ընտանիքը կը փախաբի ապահովութիւն, խաղաղութիւն եւ անդորութիւն տեսնել շրջանին մէջ, պիտի չէ ձեռնարկել իսրայէլի վրայ, որպէսզի

Շարոն՝ էջ 2

ԱՐԱՖԱԹԻ ԶՈՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՅՈՅՑ

ՈՉ ՄԷԿԸ ԿՐՆԱՅ ԶԻՍ ԱՐՏԱՔՍԵԼ

Կ'ԸՍԵ ԱՐԱՖԱԹ

Պաղեստինեան իշխանութեան ղեկավար Եսայեանը Արաֆաթը երէկ անմիջապէս հակազդեց իսրայէլեան որոշումին եւ յայտարարեց. «Ոչ մէկը կրնայ զիս արտաքսել Ռամալլայէն: Կրնան զիս սպանել, բայց պիտի չհեռանամ այստեղէն»:

Միւս կողմէ, Ռամալլայի մէջ հազարաւոր պաղեստինցիներ մեծ ցոյց մը կատարեցին երէկ զիշեր, իբրեւ գորակցութիւն իրենց ղեկավարին եւ իբրեւ հակազդեցութիւն իսրայէլեան կառավարութեան որոշումին:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՁ ՆՇՈՒԵՑԱԻ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԶՐԴ ՏԱՐԵԴԱՐՉԸ

Միացեալ Նահանգներու մէջ 11 Սեպտեմբեր 2001ին տեղի ունեցած մահացու յարձակումներուն երկրորդ տարեդարձին առթիւ, յուզիչ հանդիսութիւններ տեղի ունեցան երէկ յարձակումներու վայրերուն մէջ, մինչ պաշտօնատարներ կը զգուշացնէին, թէ աւելի ծանրակշիռ ու մահացու յարձակումներ կրնան կատարուիլ:

Ազգային սուգի օրուան առթիւ, հազարաւոր մարդիկ հաւաքուած էին «Կրտուստ Զիբո», այն վայրին մէջ, ուր Առեւտրական Համաշխարհային Կեդրոնի երկու աշտարակները կային՝ օդանաւերով յարձակումներէն առաջ:

Վայրեան մը լուռութեան էտք, 200 երեխաներ՝ ընտրուած գոհներու ընտանիքներէն, կարդացած են գոհներու անունները:

Ուաշինկթընի մէջ, նախագահ Ջորժ Պուշ Կոլընայէս վարկեան մը լուռութիւն պահած է Սպիտակ Տան մէջ:

Նախագահ, կրօնական արարողութեան մը ընթացքին, Պուշ յայտնած է. «Այսօր ազգը կը յիշէ տխուր եւ հաճելի օր մը»: Ան չէ ակնարկած Ուսամա Պըն Լատէնին, որուն ցանցը «Քալիտա», ձեռնարկած էր 11 Սեպտեմբերի յարձակումներուն:

Նախագահը Չորեքշաբթի օր գոտեւազուցած է, թէ «Քալիտա» կը շարունակէ «դաւեր սարքել» ամերիկացիներուն դէմ, սակայն անիկա «մեծ պարտութիւններ կրած է»:

Ան ըսած է, թէ անցնող 24 ամիսները «թշուամիտի» դէմ յառաջդրուած թմային ծանախաշրջաններէն է, զի իտի տալով, որ «անարեկելիները» ԱՖղանիստանի մէջ իրենց մարտկոչները կորսնցնելու հարցով են թալե-



Պուշ ամուր կը խոնարհի 11 Սեպտեմբերի յիշատակին առթիւ

որոնցմէ ետք Պուշ ընթացքի մէջ դրած էր հարեւակցութեան դէմ ընդհանրական պատերազմը:

ԶԳՈՒՅԱՑՈՒՄ

Միացեալ Նահանգներու ապահովութեան հարցերու նախարար Թոմ Թիտ երէկ յայտնած է, թէ 11 Սեպտեմբեր 2001ին ետք, Մ. Նահանգներ պաշտպանութեան շատ ծաւալուն միջոցներ կառուցած են հարեւակցական յարձակումներու դէմ:

Ան խօսած է պետական ապահովութեան 50 հազար պահակներուն մասին, որոնք ներկայիս ամերիկեան օդակայաններուն մէջ ճամբորդներուն կը հսկեն, օտար նաւահանգիստներու մէջ Մ. Նահանգներ զրկուելիք բեռներուն աւելի մեծ հսկողութիւն կը կիրարկեն:

Թիտ յայտնած է, թէ կառավարական 22 գործակալութիւններու միջոցներով կը կազմէ «կանոնաւոր կերպով պաշտպանութեան խաւեր, որոնք թափաքուտան հաւանական իրադարձութիւններէ կը պաշտպանուին»:

Միւս կողմէ սակայն, արտաքին գործոց նախարարութիւնը երէկ գոտեւազուցած է արտասահմանի մէջ գտնուող ամերիկացի քաղաքացիները «Քալիտա»ի անդամներու կողմէ հաւանական յարձակումներէ, որոնք «11 Սեպտեմբերի յարձակումներէն աւելի աւերիչ» կրնան ըլլալ:

Նախարարութիւնը ըսած է, թէ յարձակումներու յառաջիկայ ռաւունտը կրնայ եւրոպական կամ եւրասիական վայրեր թիրախ առնել:

(ԱՅՓ)

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՆՄԲՈՒՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ Հ. Յ. Դ. «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՁ



Լիբանանեան Կուսակցութիւններու Համախմբումը երէկ գումարեց իր հերթական հանդիպումը՝ Հ. Յ. Դ. «Սարգարապատ» ակումբին մէջ: Քննարկուեցան տեղական եւ շրջանային հարցեր, մասնաւորաբար Պաղեստինի եւ Իրաքի իրավիճակը:

Լիբանանեան Կուսակցութիւններու Համախմբումը հանդիպումէն ետք հրապարակեց յայտարարութիւն մը, ուր ըսուած էր, որ ժողովականները քննարկեցին Լիբանանի օդային տարածքին եւ հողերուն նկատմամբ իսրայէլեան մնալուն ոտնձգութիւնները: Հանդիպումը դատապարտեց այս ոտնձգութիւնները, որոնց վերջը ձայնողութիւնը պիտի ըլլայ: Ան նաեւ հաստատեց դիմադրութեան կարողութիւնը՝ յարմար ժամանակին եւ յարմար միջոցով պատասխանելու որեւէ ոտնձգութեան:

Հանդիպումը նաեւ քննարկեց Լիբանանի ժողովուրդին ապրած ընկերային-տնտեսական ծանր վիճակը, մասնաւորաբար կրթական նոր տարեշրջանին սեմին: Այս վիճակը կը պահանջէ, որ կառավարութիւնը որդեգրէ բացառիկ միջոցառումներ՝ քաղաքացիներուն օգնելու եւ անոնց հարցերուն լուծման նպատակով:

Յայտարարութիւնը եկաւ հաստատելու, որ Համա շարժումի ղեկավարներէն Մահմուտ Ջահարի դէմ կատարուած մահափորձը Պաղեստինի ժողովուրդին դէմ կիրարկուած յարձակողական քաղաքականութեան շարունակութիւնն է: Պաղեստինեան դիմադրութեան կազմակերպած անճանապահական երկու գործողութիւններուն ընդմէջէն արտայայտուած պաղեստինեան պատասխանը կը հաստատէ դիմադրութեան մարտավարութեան շարունակութիւնը եւ անոր բախանցումը միջնա-պարտելով անոր ոնկրները:

Լիբանանեան Կուսակցութիւններու Համախմբումը եկաւ հաստատելու, որ գանգաւ միջոցներով սիոնական թշնամիին հետ յարաբերութիւններու բնականոնացումի փորձերը դատապարտելի են եւ դաւաճանութիւն՝ պաղեստինեան դիմադրութեան եւ արաբական աշխարհի ժողովուրդին: Ան այդ, հանդիպումին մասնակիցները Պաղեստինի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն լոյսին տակ պահանջեցին, որ արաբական որեւէ կողմ զոհարեցնէ յարաբերութիւններու բնականոնացման որեւէ փորձ սիոնական թշնամիին հետ եւ որդեգրէ արաբ ժողովուրդի տեսլականներուն համընկնող կեցունածք մը՝ պոլիթիկ եմբարկելով թշնամին եւ դատապարտելով անոր ոնկրները:

Հանդիպումին մասնակիցները հաստատեցին Իրաքի ժողովուրդին իրաւունքը՝ ազատ ընտրութիւններ կազմակերպելու, հետո՛ւ ամերիկեան ազգայնութեան Անոնք կոչ ուղղեցին, որ ամերիկեան ուժերը հետանան Իրաքէ եւ ուղղուեցին իրաքեան ամէնօրեայ դիմադրութիւնը՝ այս բռնագրաւումին դէմ:

Հանդիպումը կոչ ուղղեց արհեստակցական միութիւններուն, քաղաքային կառույցներուն, լիբանանեան կուսակցութիւններուն եւ ուժերուն, ինչպէս նաեւ պաղեստինեան կազմակերպութիւններուն՝ մասնակցելու այսօր առաջնահայեցող 10:30ին լրագրողներու սեմինարի կերպով մէջ տեղի ունեցան վարչապետի ժողովուրդի գորակցութեան հասարկին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԸԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՍԻՒՆՀՈՂՈՍԻՆ

Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսաց Սիւնհոզոսը, գումարուած 1էն 9 Սեպտեմբեր 2003, կաթողիկոսական Աթոռին մօտ՝ Զմմառու կուսին Փոխման վանքին մէջ, նախագահութեամբ Ամենապատիւ եւ Գեներալնիկ Տ. Ներսէս Պետրոս ԺԺ- կաթողիկոս պատրիարքին Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց, եւ մասնակցութեամբ Հայ կաթողիկէ Նուիրապետութեան անդամներուն, ինչպէս նաեւ հրաւիրեալ անդամներուն, եկած՝ Հայաստանէն, Սուրիայէն, Իրաքէն, Լիբանանէն, Սուրբ Երկրէն, Եգիպտոսէն, աւարտեց իր աշխատանքները Երեքշաբթի, 9 Սեպտեմբեր 2003ին:

Օրակարգը կ'ընդգրկէր հովուական, ծիսական, ազգային, կրթական, ընկերային, կազմակերպչական, Սուրբ գրային եւ կոչումներու հայոց հարցեր: Ուսումնասիրութեան առարկայ եղան նաեւ Հայաստանի, Արցախի, Լիբանանի, Սուրբ Երկրի եւ Իրաքի մէջ տիրող կացութիւնը եւ այդ երկիրները յուզող իրադարձութիւնները:

Առաջին հերթին մի առ մի քննարկուեցան եւ վաւերացուեցան առաջարկները, զորո ներկայացուած էին Պատրիարքական Բ- Համագումարին մասնակցողներուն կողմէ, գումարուած մի քանի օր առաջ, Օգոստոս 26էն 29: Անոնք կ'ընդգրկէին հետեւեալ նիւթերը.

— Մեր ազգային եւ քրիստոնէական ինքնութեան պահպանումը, դիմակայելով ներկայ ժամանակներու եւ յատկապէս Համաշխարհայնացումի (mondialisation) մարտահրաւէրներն ու վտանգները: Առանց անտեսելու անոր կարգ մը դրական երեւոյթներն ու օգտուելու հնարաւորութիւնը, հարկաւոր է նկատի առնել ժխտական անդրադարձները, զորս աւ կրնայ ունենալ հոգեւոր, ազգային, մշակութային եւ ըստական արժէքներու վրայ: շեշտուեցան անհրաժեշտութիւնը չհզորացնելու զանոնք՝ յատկապէս պատանիներու եւ երիտասարդներու կազմաւորումին մարզին մէջ:

— Աշխարհականները դարձնելու իր գործուն ու յանձնուող Եկեղեցւոյ կենսաբնական, յատկապէս ընկերային, տնտեսական եւ այլ մասնագիտական մարզերու

մէջ:
— Նկատելի է. Կ. Ս. Ս. (Հայ Կաթողիկէ Միութիւն) իրր աշխարհականի առաքելութեան ազդու միջոցներէն մէկը եւ ընդհանրացնել անոր գոյութիւնն ու զարգացումը մեր ժողովրդապետութիւններէն ներս:

— Բնորոշել փոքր յարաբերութիւնները եւ համագործակցութեան կերպերը կղերի եւ աշխարհականներու միջեւ:
— Միջոցներ որոնել լրացնելու համար երիտասարդներու կարիքները կրթական, ընկերային, տնտեսական մարզերու մէջ, յատկապէս մասնագիտացածներուն ապարկէզ գտնելու ջանքով:

— Քաջալերել դրութիւնը լաւ կազմաւորուած միայուն սարկաւակներու եւ ի գործ դնել անոնց իրաւասութիւնները կարգ մը խորհուրդներ մատակարարելու, ըստ կանոնագիրի տրամադրութեանց:

— Քաջալերել եւ կրօնաւարական կոչումներ արձարծելու կենսական գործին մէջ միասնական աշխատանքի լծել կղերն ու աշխարհական դասը, ինչպէս նաեւ ընտանիքներն ու կազմակերպութիւնները:

— Համամիութենական մարզէն ներս, վերաբործել պաշտօնական եւ գործօն երկխօսութիւնը բոլոր եկեղեցիներուն հետ:

— Գոյութիւն ունեցող համացանցային (Internet) դրութիւնը միաւորել, զարգացնել եւ ընդհանրացնել մեր բոլոր թեմերուն մէջ:

Ապա Սիւնհոզոսը անցաւ նախատեսուած օրակարգի միւս նիւթերուն քննարկումին եւ տուաւ հետեւեալ որոշումները.

Ա.— Որոշեցան եւ կիրարկուեցին զինք բոլոր Հայ կաթողիկէ վարժարաններուն մէջ, յատկապէս դպրոցական տարեշրջանին սկսեալ, Քրիստոնէականի նոր դասակարգները, պատրաստուած յատուկ յանձնախումբին կողմէ: Ինչպէս նաեւ հրատարակել Տիեզերական Եկեղեցւոյ Քրիստոնէական Վարդապետութեան հայերէն թարգմանութիւնը:

Բ.— Ծիսական հարցերու առնչութեամբ, անգամ մը եւս շեշտուեցան անհրաժեշտութիւնը Սուրբ պատարագի մատուցման միաձեւութեան: Որոշուեցաւ հրատարակել աշխարհաբար թարգմանութիւնը թիւ պատարագին եւ Երեկոյան ժամերգութեան: Ծիսական րարենորոգումը, Սուրբ պատարագին եւ խորհուրդներու մատակարարման վերաբերեալ, պիտի հետապնդուի նորակազմ ծիսական յանձնախումբով: Շեշտուեցաւ նաեւ կարիքը լուսարանելու հաւատացեալները՝ Ապաշխարութեան խորհուրդին կարեւորութեան մասին:

Գ.— Որոշուեցաւ Ս. Գրիգոր Նարեկացի «Տիեզերական Եկեղեցւոյ Վարդապետ» հոշակել տալու աշխատանքները հետազոտել, գործակցութեամբ յատուկ յանձնախումբի մը կողմէ: Նկատի առնուեցաւ նաեւ կազմակերպումը միաձուլմանը, նուիրուած հոգեւոր քանաստեղծութեան տիտանին, զանազան երկիրներու մէջ:

Դ.— Սուրբ Գրիգոր աշխարհաբար թարգմանութիւնը վերջնական վերատեսչութեան պիտի ենթարկուի եւ ապա տպագրութեան յանձնուի:

Ե.— Որոշուեցաւ արտակարգ Համաժողով գումարել, յաջորդ Եպիսկոպոսաց Սիւնհոզոսէն առաջ, յատկացուած կղերի մնացուց կազմաւորման եւ յարակից հարցերուն, ինչպէս նաեւ քահանայական ու կրօնաւորական կոչումներու հրատարակ հարցին:

Սիւնհոզոսական Հայրերը անգամ մը եւս անդրադարձան Լիբանանը, Սուրիան, Իրաքը եւ Սուրբ Երկիրը յուզող հարցերուն եւ վերահաստատեցին իրենց վճռական կեցուածքը անոնց կողմէն՝ որ կ'աշխատին այս ուղղութեամբ:

Ժողովական Հայրերը իրենց ուսումնասիրութեան առարկան դարձուցին վերջապէս Մայր Հայրենիքի մեր առաքելավայրերը եւ հոն գործող մեր քահանաներն ու մայրապետները, զօրավիզ կանգնելով անոնց տարած մեծապէս գնահատելի աշխատանքին՝ քրիստոնէական ու ազգային դաստիարակութեան, ինչպէս նաեւ բարեփրական ու մշակութային մարզերու մէջ:

Անոնք յայտնեցին նաեւ իրենց զօրակցութիւնը մեր հայրենի ղեկավարներուն՝ հետ, անոնց պայքարին մէջ ի խնդիր Մայր Հայրենիքի անկախութեան հզօրացման ու բարգաւաճման, ինչպէս նաեւ Արցախի պետականութեան ամրացման ու միջազգային ճանաչման:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ ԸԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՅ ՍԻՒՆՀՈՂՈՍԻՆ


Զմմառ, 9 Սեպտեմբեր 2003

Կրթական նախկին նախարար ԱՊՏԸԼ ՌԱՀԻՄ ՄՐԱՏԻ վկայութիւնը ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃԻ

30-ամեակին առթիւ

«...Լիբանանի մէջ թեքնիք ուսման ճամբուն վրայ մեծ է ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃԻ ներդրումը: Այս գոյէճի արձանագրած յաջողութիւնը ինքնին աղաղակող փաստ է, թէ ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃ 30 տարուայ ընթացքին յաջողած է իր առաքելութեան մէջ եւ շահած նախարարութեան ամբողջական վստահութիւնը: 30ամեակին առթիւ, որպէս կրթական նախարար կը շնորհաւորեմ շրջանաւարտները եւ քոյէճի հիմնադիր-տնօրէն պրն. Պետրոս Շնմմէսեանը...»:

Խօսուած՝ Ուրբաթ, 12 Յուլիս, 2002, վկայականաց բաշխման հանդէսի ընթացքին



السفير
الجمهورية
الجزيرة
الاستقبال
الشرق

«Ինգլիզաբոլ, 11 Սեպտեմբերի լիբանանեան մամուլը իր ընդհանուր գիծերուն մէջ իբրեւ ուշադրութեան կեդրոն շարունակեց դրամատան տագնապը, ելեկտրականութեան հարցը, Պատապա-Ալէյի երեսփոխանական մասնակի ընտրութիւնները եւ Լիբանանի դիմագրաւած այլ հարցերը:

Լիբանանեան թերթերը նաեւ անդրադարձան Համասի դեկավարներէն Մահմուտ Չահարի դէմ կատարուած իրապիւստմահափորձին եւ այդ մահափորձին անդրադարձներուն, ուրիշական կառավարութեան փոփոխութեան, Ահմէտ Քորէյի կառավարութեան կապմութեան եւ Իրաքի ներկայ կացութեան:

ՊԱՍՊՏԱ-ԱԼԷՅԻ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարաւային Մեթնի (Պատապա-Ալէյի ընտրատարածք) երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն ժամկէտը կը մօտենայ, մինչ նախկին նախարար եւ երեսփոխանական կառավարութեան փոփոխութեան, Ահմէտ Քորէյի կառավարութեան վրայ պիտի տիրէ ապահովական բնոյթը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ

Լիբանանեան մամուլը յատուկ կերպով անդրադարձած էր Չորեքշաբթի օրուան կառավարութեան արտակարգ ժողովին, որ նուիրուած էր ելեկտրականութեան, թիւ 1 քաղաքական թղթաբարին, եւ այլ ընկերային հարցերու քննարկման:

Այս առնչութեամբ «Նահար» օրաթերթը յայտնեց, որ կառավարութիւնը որոշեց բաժնակցութիւններ վարել Քուէյթի հետ, աժան գիներով վառելիքի գնելու համար: Կառավարութեան մէջ գոյացած է քաղաքական «ելեկտրական» համաձայնութիւն, ելեկտրականութեան ֆինանսաւորման եւ կապի ծրագիրներուն շուրջ:

Ըստ «Անուար»ի, նախարարաց խորհուրդը իր արտակարգ նիստին ընթացքին նշած է, որ ելեկտրական ցանցին վրայ կատարուած գողութիւնները եւ ելեկտրականութեան ընկերութեան միջկառուած նիւթական միւսումնեւորութեան իշխանութիւններուն պարտականութիւնն է: «Մատին» դրամատան տագնապին թղթաբար վակելէն ետդարձ կատարելու շարժումը:

Չահար փրկուեցաւ իրապիւստմահափորձէն, որ խլեց իր կալիքն (եթնք, իսկ Համաս կը խոստանայ իր թիրախները փոխադրել իւրայեւան բնակավայրեր: Քորէյի համաձայն կը գտնուի կապմելու «արտահուրդը որոշեց ելեկտրականութեան մարպին տրամադրել 300 միլիարդ լիբանանեան ոսկի:

«Սաֆիր»ի համաձայն, Ապու Ալա (Ահմէտ Քորէյ) կը կապմել իր կառավարութիւնը Արաքաթը պաշտպանելու համար: «Սաֆիր» կ'աւելցնէ, որ Իսրայիլ կը պատասխանի ներխուժել Կապի շրջան՝ պաշտպանեան դիմադրութեան նկատմամբ հաշուեյարդար տեսնելու համար: «Նահար» իր կարգին կը նշէ, որ Քորէյի կապմելը կառավարութեան վրայ պիտի տիրէ ապահովական բնոյթը:

ՍՈՒՐԻՈՅ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Շրջանային թոհուրոհի այս մթնոլորտին մէջ Սուրիոյ վարչապետ Մոհամէտ Մուսաֆա Միրո տուա իր կառավարութեան իրաժարականը: Մուրիոյ նախագահ Պաշար Ասատ վերջինիս փոխարէն վարչապետ նշանակեց խորհրդարանի նախագահ Լարօ Օթարին: «Սաֆիր» օրաթերթին համաձայն, այս նշանակումը տեղի ունեցաւ երկրին մէջ բարեկարգումները յառաջ մղելու: Նախագահ Պաշար Ասատի իշխանութեան առաջին կառավարութիւնը պիտի կապմուի քանի մը օրէն:

«Նահար» օրաթերթը նշած էր, որ սուրիական նոր կառավարութեան կապմութիւնը «միջին լուծում» մըն էր «հին եւ նոր պահակաուղերուն» միջեւ:

ԱՅԼ ԻՐԱՂԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

11 Սեպտեմբերի կրճակման յիշատակին նախօրեակին «Քալիտա» կապմակերպութեան ղեկավար Պրն Լատէն եւ անոր փոխանորդը՝ Այ-փորձէ վերադառնալ 1975, մենք ալ պատրաստ ենք վերադառնալու: Միւս կողմէ, Անուական շարժումը յայտարարած է, թէ մէկ ընտրատարածքին դրութիւնը պիտի չի վախցնէր:

ՄԱՇՏՈՒՏ ԶԱՇԱՐԻ ՄԱՇՏՈՐՁ

Պաղեստինեան գրաւեալ հողերուն մէջ Իսրայիլի գործարած պետական ահաբեկչութիւնը նոր բարձրակետի մը հասաւ, երբ Իսրայիլ քանդեց Համասի աշխատող ղեկավարներէն տղք Մահմուտ Չահարի բնակարանը՝ խլելով երեք պոհ իր պահակներն եւ թիկնապահներէն: Այս հարցին գծով «Անուար» կը գրէ, որ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Բագար

ԽԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 2, ԳԱՐՈՒՆ

ԲԱԳԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՐԿԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 9, 2003

41

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

1.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Բանաստեղծութիւններ
13.- Պ. ՀԱՃԵԱՆ	Անկատար առեւանգում
20.- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Բանաստեղծութիւններ
23.- Ս. ՉԵՔԻՃԵԱՆ	Ամառային Անձրեւ
40.- Ծ. ԳՐԸԱՐԵԱՆ	Նշեմքիմ ոտք
44.- Վ. ՅՈՒՅԱՆԵԱՆ	Օրագիր
63.- Ս. ԲԻԼԵՃԵԱՆ	Անձրեւ
64.- « « «	Առանց հրաւերի
65.- « « «	Դոկտ. Նորա Արիսեան
69.- ՌԻ. ՊԵՆԵՆԻ	Ագնիւն ու... իր քոյրերը
74.- « « «	Սասուն Գրիգորեան
80.- Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Քսանդրոս ժամ Պոլսում
103.- « « «	Անյուսափելիք
105.- Պ. ՍԱԿԻՆՅԵԱՆ	Ապարշաւը...
106.- « « «	Ի ցաւ
109.- Կ. ԶԱՐԵԱՆ	Մի էջ
112.- Բ. ԹԱՃԵԱՆ	Սեղանչումը...
117.- ԽՈՒՄԲ ՍԸ ՍՄԱԿՐԱԿԱՆՆԵՐ	Յանուն միասնական ուղղագրութեան
120.- ՊԵՊՕ ՅԱՆՈՆԵԱՆ	Դասական ուղղագրութիւնը Հայրենիք-Սփիւռք փոխյարաբերութիւններու տեսանկիւնէն
123.- Կ. Ա. ՍԻՍՈՆԵԱՆ	Իսկ իմ հայրենիքը հայերենն է...
125.- ԶԱՇԱՆԴՈՒՄՏ	Մեր ուղղագրութիւնը...
126.- Լ. ՍԻՐԻՉԱՆԵԱՆ	Ժամանակը պարտաւորեցնող է
133.- « « «	Ակադեմիկոսներուն հակասութիւնները... «Կակած չունենք»...
135.- « « «	Մեծաքանչը եւ մեծը...
136.- Ն. ԶԱՐԻՈՒՄԵԱՆ	Մեծաքանչը եւ մեծը...
139.- Բ. ՉՈՒԲԵԱՆ	Միասնական ուղղագրութեան խնդիրը հրատապ է...
143.- « « «	«Հիմնական մասը»...
144.- Լ. Գ. ԽԱՉԻՐԵԱՆ	«Երբ էլ լինի վերադառնալու ենք»...
147.- « « «	Ոչ մէկ կասկած
148.- « « «	Նշարներ
157.- « « «	Մշակութային լուրեր

ՀԱՋԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՒ ՀԵՏ

2 «ՏԷ՛Ր, ՕԳՆԷ՛ ԻՆՏԻ»

Կը թուի թէ Նարեկացի գրտէր թէ ինչպիսի ընդարձակածաւալ գործի մը կը ձեռնարկէր երբ կը սկսէր գրել «Մատեան Ողբերգութեան»ը: Իր մտքին մէջ արդէն ամբողջական պատկերը կա՞ր այն գործին որ պիտի ստեղծուէր, չենք գիտեր, բայց դժուար չէ ենթադրել որ Նարեկացին քսան կամ երեսուն էջ ընդ մատեան մը գրելու նպատակով չէ՛ր որ ճամբայ կ'ելլէր, երբ կը բանար իր սրտի խորքերը: Ծրագրեր լայն էր եւ ատիկա կրնար իր յաջող աւարտին հասնիլ միայն Աստուծոյ օժանդակութեամբ:

Լսե՛ գիս, Աստուած, Աստուածդ ամենայն մարմնի ու հոգիի ըստ դաւանութեան տիրաշնորհի: Շնորհ ըրէ՛ ինձ, որ օրհնեալ կամքիդ բարեհաճութեամբ սկզբնաւորուած աղբսամատեանն այս ողբերգութեան, հասնի աւարտին:

Ասիկա աղօթքն է այն մարդուն, որ երկար ուղեւորութեան մը ելլելէ կամ կարեւոր գործի մը ձեռնարկելէ առաջ պահ մը կը ծնրադէ խորանին առջեւ եւ բարեյաջող երթ կը խնդրէ Աստուծմէ: Հեղինակը մարմնական ու բարոյական մեծ ուժերու պիտի կարօտի այդ մատեանը իր աւարտին բերելու համար եւ մի առ մի կը խնդրէ Աստուծմէ, որ Տէրը զինքը հեռու պահէ այն ժխտական զարգացումներէն որոնք պիտի կասեցնեն Մատեանին ստեղծագործութիւնը: Կ'արժէ տեսնել թէ մտածումի ու բանաստեղծական արուեստի ինչ գեղեցիկ գիւտեր կ'ընէ Նարեկացի, երբ այստեղ գանազան շնորհներ կը խնդրէ Աստուծմէ: Հարիւրաւոր տողերու մէջէն ընտրենք մէկ քանին ու կարգանք ուշադրութեամբ, որպէսզի տեսնենք թէ ինչ նրբութիւններ կան այդ տողերուն մէջ: Տարակուսածիս այս հեծեծագին աղբսամատեանը սկիզբէն յայտնէ բարեգութ կամքի որ կարողանամ գործնալ այստեղ, որպէսզի երբ որ վերին երկնքը իմ առջեւ բացուի չըլլայ յանկարծ որ ես՝ լոյս վայելելու անվարժ, անընտել, մոմի մը նման հալելով ի սպառ ջնջուիմ մէջտեղէն:

Թող չպատահի ինձի յանկարծ երկնել սակայն չծնիլ, Ողբայ՝ սակայն չարտասուել, Խորհիլ՝ չհառաչել, Ամպիլ՝ չանձրիւնել, Երթալ՝ չհասնիլ, Քեզ ձայն տալ, եւ դու ձայն չլսես, Պաղատիլ, սակայն անտեսուած մնալ, Աղաչել Քեզի, բայց ոչինչ չհախիլ, Ձոհեր մատուցել, բայց չենճենքել, Քեզ տեսնել, սակայն ձեռնադրուած դուրս գալ: Լսե՛ գիս, նախքան ես կը դիմեմ քեզ, Ո՛վ միակ հօգօր, Մեղքերով ապրած օրերուն չափ շատ Անվճար բողոք տոյժի՛ յանցապարտիս Նոր տանջանքներով վճարել մի տար: Փրկե՛ գիս, գթած, լսե՛, ողորմած, Մարգասեր եղիբ ինձի հանդէպ, ներող:

Հաւատացեալ մարդու մը բարեմիտ աղբսամատեանը ցուցնող հարեւրաւոր սովորական տողերու մէջէն յանկարծ դուրս կու գան վերիններուն նման հետաքրքրական տողեր, որոնց վրայ կ'արժէ որ ընթերցողը կանգ առնէ առանձին կերպով: Բանաստեղծին աղաչանքը յատկա է՝ չըլլայ՝ որ իր երկունքին մէջ ոչինչի մը ծնունդ տայ, չըլլայ՝ որ ողբը բայց չկարենայ արտասուել, չըլլայ որ խորհիլ առանց հառաչելու ու տառապելու, առանց մտածումին ցաւը խորապէս զգալու, չըլլայ՝ որ ամպ դառնայ սակայն չկարենայ անձրիւնել, չըլլայ՝ որ երթայ բայց տեղ չկարենայ հասնիլ, չըլլայ՝ որ Աստուծոյ ձայն տայ բայց անլսելի մնայ, չըլլայ՝ որ զոհեր մա-

տուցանէ, բայց այդ զոհերուն հոտն ու համը չհասնի վերինին, չըլլայ՝ որ Աստուծոյ ներկայանայ ու ձեռնուտայն դուրս գայ:

Նարեկացիին այս աղբսամատեանը արդէն դուրս ելած է «Մատեան Ողբերգութեան»ը իր աւարտին յաջողապէս հասցնելու պաղատանքի նեղ շրջանակէն եւ սկսած է ընդգրկել ամբողջ իր կեանքը, մինչեւ մահ, մինչեւ այն ահաւոր օրը, երբ ան պիտի ներկայանայ Տիրոջը: Վերջին հաշուով, բանաստեղծը կը խնդրէ, որ երբ իր վերջին շունչը փչէ, Տէրը թող ընտրէ երկնային երջանիկներէն լուսաթուիչ ու մաքուր հոգի մը, որ զինքը պիտի դիմաւորէ իրեն հետ բերելով Աստուծոյ սիրոյ պարգեւ: Տէրը թող իր անակնկալ բարին շնորհէ այն յուսահատ չարագործին, որ ներկայացած է իրեն:

Ո՛վ բարեբանեալ փրկիչ բոլորի, հիւանդ ոչխարիս որպէս ուղեկից չըլլայ՝ որ տաս դժնդակ գագան: Մեղքով մեռածիս պարգեւէ, գթած, անպակաս կեանք, Ու կործանուածիս ծանր պարտքերից փրկութիւնը քո:

Վերի տողերուն մէջ ընդգծենք սա երկու գեղեցիկ տողերը, որոնք պերճախօս են.

«Տէր, հիւանդ ոչխարիս որպէս ուղեկից չըլլայ՝ որ դժնդակ գագան մը տաս»:

Գագանները հեռու թող մնան իրմէ, երբ ան այս աչխարհի վրայ պիտի աւարտէ մեղաւոր մարդու կեանքը եւ ճամբայ պիտի ելլէ դէպի երկինք: Ինք չի գրեր, բայց յայտնի է: Կ'ուզէ որ հրեշտակները իրեն ընկերանայ յաւերժական կեանքի այս գերազանց ուղիին վրայ:

Ռ. ՀԱՍՏԵՃԵԱՆ

ԴԵՊԻ ՈՎԱՍԻՍ 2004

Ուրբաթ, 5 Օգոստոսի երեկոյեան, տեղի ունեցաւ հայ կաթողիկէ Մեսրոպեան Արուեստից վարժարանի «Ովասիս» ամառնային մանկապատանեկան ծրագրի այս տարեշրջանի փակման հանդէսը, վարժարանի շրջակային մէջ: Շուրջ 500 հիւրերու ներկայութեան, «Ովասիս»ի 125 մանուկ եւ պատանի մասնակիցները ներկայացուցին գեղարուեստական եւ մարզական հետաքրքրական յայտագիր մը, գոր կրնանք համարել մանրանկարը ծրագրի 2 ամսուան վրայ երկարած աշխատանքներուն: Տարիքային 4 խումբերու բաժնուած ովասիսականները կատարեցին հայերէն եւ իտալերէնով 4 երգեր, 6 խմբային պարեր, երգիծական 2 սքեչներ, ինչպէս նաեւ մարտարուեստի բարձր վարժութիւններ, որոնք արժանացան հանդիսատեսներու բուռն դիմապատանքին:

Հանդէսը առիթ մը եղաւ նաեւ համակարգչային - ռքփորթաթի տեսքով հանդէստուութիւն մը ներկայացնելու «Ովասիս»ի երկամսեայ աշխատանքներուն մասին: Այնտեղ ցուցադրուեցան ամառնային պարտականութեան դասապահները, երգի, պարի, թատրոնի, ձեռագիտի աշխատանքներու, մարզանքի եւ համակարգիչի դասընթացները, ինչպէս նաեւ ուրբաթօրեայ պոստյոններու յայտագրերը, որ կ'ընդգրկէր պատմական ու տեսարժան վայրեր այցելութիւններ՝ ժամանցի ու դաստիարակութեան գուրգուրանքով: 2003ի ամառուան «Ովասիս»ը հաստատեց իր 5 տարիներու գոյութեան մրցանիչը, հիւրընկալելով 125 մասնակիցներ, Լիբանանի 28 տարեբար շրջաններէ ժամանած: Այս տարուան ովասիսականները կու գային 20 տարեբար վարժարաններէ, ինչ որ այս ծրագրերը կը վերածէ տարբեր միջավայրերու:



մէջ հասակ առնող փոքրերու իւրայայտուել ժամադրավարի մը: Անդրադառնալով այս երեւոյթին, Հայ կաթ. Մեսրոպեան Արուեստից վարժարանի տնօրէն Կրէկուար Գալուստ հանդէսի փակման եւ իտալերէնով 4 երգեր, 6 խմբային պարեր, երգիծական 2 սքեչներ, ինչպէս նաեւ մարտարուեստի բարձր վարժութիւններ, որոնք արժանացան հանդիսատեսներու բուռն դիմապատանքին: «Ովասիս»ի հանդէսը փակուեցաւ հրապարուցութեամբ, ընկերացած՝ «Ովասիս» խմբերգով, որ խոստումը եւ փափաքը կար դարձեալ հանդիպելու Մեսրոպեանի յարկին տակ՝ 2004ի ամառնային արձակուրդի օրերուն:

ԿԵՐԱՍՈՒՏ
Ս. ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ
(Ֆամար, հեռ. 891 545)
1.- 2003-2004 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ 26 Սեպտեմբեր 2003, ամէն օր բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, ժամը 8:30ԷՆ 12:30:
2.- Վերաքննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ ժամանակացոյցով.
Երկուշաբթի, 22 Սեպտեմբեր 2003 Թիւ
Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003 Արաբերէն
Չորեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2003 Անգլ. եւ Հայ լեզու
Հինգշաբթի, 25 Սեպտեմբեր 2003 Գիտ. եւ Հյո. Պաժ.
Վերաքննութիւնները տեղի կ'ունենան առաւօտեան ժամը 9:00ին:
3.- Օթըջարի սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:
4.- Յալելեալ մանրամասնութեանց համար դիմել տնօրէնութեան:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՓՈՐՉ ՄԵ ԴԵՊԻ ԱՐՄԱՏՆԵՐ...



Սկսուող ժամը ընդհանրապէս կ'ապրի դժուար օրեր, տնտեսական դժուար պայմաններուն եւ այլ ժամանցներու բազմազանութիւն պատճառով: Այս իրականութիւնը ընդունուած է ամէնուրեք, սակայն այս մէկը պատճառ մը չէ չփորձելու վերապահելու անհաջող սկսուողական ոգին, կարգապահութիւնը եւ «հին» միջոցները: Այս հեռանկարով, Հ.Մ.Լ.Մ.ի Պէջրութի խմբակներու կազմակերպեց 2002-2003 տարեշրջանի բանակումը 16էն 24 Օգոստոս, Պասքընթայի մէջ: Արդ, ելեկտրականութիւնը, բջիջային հեռախօսը եւ «թափուելիք» պնակները, դգայները եւ պատառաքողները արգիւտած էին, բանակավայրը միայն ու միայն լապտերներն էին, որ կը լուսաւորէին...
Բանակումը եղաւ յիշատակելի ամէն իմաստով, հակառակ վերջին վայրկեանի կազմակերպութեան եւ վերջին իսկ ժամուկ գոյքերու դասաւորման: Կազմակերպութիւնը, գործադրութիւնը, յայտագիրները, կեցւածքները, կարգապահու-

թիւնը եւ անշուշտ այս տարուան թի-շըրքները եղան գնահատելի:
Բանակումը, որուն սկսիլը որոշուած էր 18 Օգոստոսին, սկսաւ 16 Օգոստոսին: Մասնաճիւղիս երէցները հաւատարիմ մնալով իրենց «Միշտ օգնող» նշանաբանին, մեկնեցան բանակավայր եւ կազմեցին բաղնիքը, լոգարանը, լուացարանը եւ դասաւորեցին շուրթի ամբողջական սարքաւորումը:
Առաջին անգամ ըլլալով Հ.Մ.Լ.Մ.ի Պէջրութի պատմութեան մէջ, երբ սկսուեցին բանակավայրը ժամանակեցին՝ 18 Օգոստոսին կրցան լուացարանի, եւ պատրաստ գտան իրենց բաղնիքները լոգարանը:
Այսպիսով ամսուան 18ին պարմանուհի, արի եւ արեւու ճառագայթներով աւարտեցաւ ու սկսաւ վերապահել իրենց բանակումը: Ամբողջ Կիրակի օրը տեւեց բոլոր գոյքերու հաւաքն ու տեղաւորումը: Աննախընթաց էր Գայլիկ-Արծուիկներուն ներկայութիւնը, որ մեծապէս դիւրացուց բոլորին՝ ցործի մասնաճիւղին հի-

մը կազմող մոկիները մասիրենց ներկայութեամբ աննախընթաց բանակարկողներուն:
10 օրերու ընթացքին ընդամենը 115 սկսուողական կազմակերպութիւնները մին:
Մասնաճիւղի այս բանակումին առաջին երկու օրերը նուիրուած էր կարգերուն, այլ խօսքով բանակողները բաժնուած էին երեք խումբերու՝ Ա., Բ. եւ Նորընծայ կարգեր:
Ա. կարգերը պատասխանատու էին խոհանոցի սարքաւորման, ինչպէս նաեւ ունէին հետազօտական արշաւ մը ամբողջ երեքշաբթի օրը՝ Պասքընթային Մաննիի գիւղը:
Բ. կարգերը ամբողջապէս Մաննիի գիւղը զրօշակի կայան ու մուտքը, իսկ նորընծայներուն վստահուած էր բանակավայրի սարքաւորումները: «Վրասներ, մաքրութիւն, լապտերներ, եւ այլն...»:



Բանակավայրը ճիշդ է, որ փոշոտ էր ու յոգնեցուցիչ, սակայն միեւնոյն ժամանակ իւրայայտուել էր այն իմաստով, որ ամէն մէկ խմբակներու մէջ խմբակներու մասնաճիւղի բանակավայրը, որուն ինք ամբողջութեամբ պատասխանատու էր:
Չորեքշաբթի Գայլիկ-Արծուիկներուն ժամանումով խումբերուն բանակումը սկսաւ: Արշաւներ, դասախօսութիւններ, ձեռագիտի աշխատանք ու մարզանք կը յաջորդէին իրար:
2002-2003 տարեշրջանը արդէն իսկ կ'երեւի հորիզոնի վրայ: Նոր էջ մը պիտի բացուի Հ.Մ.Լ.Մ.ի Պէջրութի սկսուողական դիմաց, ուր բոլոր աւելի փորձառու դարձած այս բանակումին՝ պիտի չխնայեն տալու իրենց լաւագոյնը, միշտ պատրաստ մարզանք կը յաջորդէին իրար:
Ուրբաթ 22-8-2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին, տեղի ունեցաւ մասնաճիւղի շրջանային հանգրուանային (12 հանգրուան) ընդարձակ խաղ մը, որ մեծ խանդավառութիւն յառաջա-

ԱՉԳԱՅԻՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ
ՅԱԿՈՒԲԵԱՆ ՔՈՒԷՆ
Հեռ. 01/262618
E-mail:sofiyahag@inco.com.lb
2003-2004 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները կը վերսկսին Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2003ԷՆ սկսեալ, ամէն օր ժամը 9:00ԷՆ 1:00, բացի Շաբաթ օրերէն:
4-Վերաքննութիւնները ու մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ թուականներուն, առաւօտեան ժամը 8:30ԷՆ սկսեալ.
•Երեքշաբթի, 16 Սեպտեմբեր 2003 - Լեզուներ
•Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2003 - Գիտական նիւթեր
•Հինգշաբթի, 18 Սեպտեմբեր 2003 - Այլ նիւթեր
•Պրովի եւ Գ. երկրորդականի դասընթացները կը սկսին Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003ին:
•Տարագի եւ գիրքերու ցանկերու յանձնումը կը կատարուի Հինգշաբթի, 25 Սեպտեմբերէն սկսեալ:
•ՎԵՐԱՍՈՒՏ՝ Հինգշաբթի, 2 Նոյեմբեր 2003ին:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԾՆԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵԸԱԳՐՈՒԹԵԱՆ
«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀ



ՓՆԿ ՓՈՆԿ

ՉՈՅԳԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Լիբանանի փինկ փոնկի ախոյեանութեան աղջկանց զոյգի մրցումներուն, երէկ Մոն Լա Սալի մէջ, Նոէլ Բէշլիան - Դուրի Մունըղեան Հ.Մ.Ը.Մ.ական զոյգը, իր կատարած առաջին մրցումին 3-0 արդիւնքով պարտութեան մը կրեց Ռուպա Պըսէյպէս - Ռիթա Պըսէյպէս զոյգին:

Հ.Մ.Ը.Մ.ի մնացեալ երկու մարզիկները սակայն, Լարա Բէշլիան և Լիզա Պարիկեան յաջողաբար պարտութեան մատնելէ ետք իջնան Քալամի - Լայալ Հալայի (3-0), Ռանա Մըրջի - Ժոզէթ Ժըղէյալ (3-0) և Նատա Ըլէյլայի - Մունիրա Ալի Հասան (3-0) զոյգերը, տիրացան Լիբանանի զոյգ աղջկանց ախոյեանութեան տիտղոսին:


Չոյգի տղոց մրցումներուն, Ռազմիկ Շեմեմեան - Մայք Թաուրի Հ.Մ.Ը.Մ.ական զոյգը յաջողեցաւ հասնիլ մինչեւ կիսաւարտական, ուր պարտուեցաւ (3-1) Մոհամէտ Հապաշ - Ռաշիտ Պըլպո զոյգին: Այս վերջինները, աւարտականի պարտութեան մատնեցին Ժոզէթ Շալուպա - Ալֆրէտ Նաթրմ զոյգը (3-0):

Տղոց անհատական մրցումներուն, այսօր տեղի կ'ունենայ Ռազմիկ Շեմեմեան - Մոհամէտ Հապաշ քառորդ աւարտականի մրցումը: Նշենք, թէ իր կատարած նախորդ մրցումներուն, Ռազմիկ յաջողաբար պարտութեան մատնեց Մուսթաֆա Ուրիլի, Սայիտ Անթունը եւ Սամէր Արէհը, երբեք ալ 3-0 արդիւնքով: Լիբանանի փինկ փոնկի ֆետերասիոնին կողմէ հրապարակուած յայտագիրին մէջ, Սամէր Արէհ անունին փոխարէն յիշատակուած էր Սահակ Պետրոսեանի անունը, սակայն նկատի ունենալով որ այս վերջինը մրցաշարքէն քաշուեցաւ, Ռազմիկ իր երրորդ յաղթանակը արձանագրեց Արէհի դէմ եւ ոչ թէ՛ Պետրոսեանի դէմ:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԶՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՊՐԱԶԻԼԻ ԵՐԿՐՈՐԴ 3ԱՂԹԱՆԱԿԸ

Հարաւային Ամերիկայի գօտիէն ներս տեղի ունեցող 2006ի Մոնտիալի գտումի 2րդ հանգրուանի մրցումներուն, աշխարհի ախոյեան Պրազիլ իր կատարած երկու մրցումներուն ալ յաղթանակ արձանագրեց, ապահովելով առաւելագոյն վեց կէտերը:



Ռոնալտիմիո

Հակառակ տիտղոսակիրը ըլլալուն, Պրազիլ գտումի մրցումներ կը կատարէ, մրցաշարքին պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, որովհետեւ նախապէս տիտղոսին տիրացող խումբերը ուղղակիօրէն կ'ապահովէին աւարտականին իրենց տոմսը:

Իր կատարած առաջին մրցումին, Քրոմպիան 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Պրազիլ, երկրորդին, երէկ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Էքուատորը, շնորհիւ՝ Պարսելոնայի մարզիկ Ռոնալտիմիոյ նշանակած կողին (13րդ):

Մովու մակերեսէն 3600 մեթր բարձրութեան վրայ գտնուող Լա Փազի մէջ, Պրիլիլիա 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Քրոմպիան, որ այսպիսով կրեց իր երկրորդ պարտութիւնը:

Պրիլիլիա նման մրցաշարքի իր առաջին յաղթանակը արձանագրեց Փարակուէյ, որ 4-1 արդիւնքով պարտութեան մատնեց Ուրուկուէյը: Փարակուէյէն հէթ-ըրի մը իրագործեց խոսէ Բարոսոս, իսկ Պրիլիլիայէն՝ Ժոնաթան Պրիլիլի:

Ստորեւ՝ 3րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ 15 եւ 16 Նոյեմբերին):

- Փարակուէյ - Էքուատոր
- Արժաճիլի - Պրիլիլիա
- Քրոմպիա - Վենեսուելա
- Ուրուկուէյ - Զիլի
- Փերու - Պրազիլ

ԼՈՒՐԵՐ՝ ԵՐՐՕ - 2004Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱՐՔԸՆ

11 Հոկտեմբերին տեղի ունենալիք Եւրօ 2004ի գտումի մրցաշարքին վերջին հանգրուանի մրցումները գրեթէ յստակ պիտի դարձնեն, թէ ո՞ր խումբերը պիտի գրաւեն իրենց խմբակին պարագլուխի դիրքերը, կամ թէ որո՞նք պիտի գրաւեն երկրորդ դիրքերը, որմէ ետք վիլյօֆի մրցումներ պիտի կատարեն իրարու դէմ: Նշենք, թէ ցարդ տասը խումբերէն երկուքը՝ Հոլանտա եւ Սլովենիա ապահոված են վիլյօֆի մրցումներուն իրենց տոմսերը, իսկ Ֆրանսա, Պուլկարիա, Չեխիա եւ Շուէտ, ինչպէս նաեւ Փորթուգալ իբրեւ հիւրընկալ երկիրը, ապահոված են աւարտականներուն իրենց տոմսը:

Ստորեւ՝ վերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան Շարաթ, 11 Հոկտեմբերին):

Ս.Ի. ՍԻՐԵԱԿ

Կիպրոս - Սլովենիա
Ֆրանսա - Իսրայէլ

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

Նորվեկիա - Լուքսամպուրկ
Պոնտիա - Դանիա

ԻՏԱԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԹԻԻԸ 18ԷՆ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱՅ 20Ի

Իտալիոյ ֆուլբոլի ֆետերասիոնը երէկ ըսաւ, որ յառաջիկայ եղանակէն սկսեալ Ա. դասակարգի խումբերուն թիւը 18էն պիտի բարձրանայ 20ի:

Ֆետերասիոնը այս որոշումին յանգեցաւ այսպիսով վերջ մը դնելով Բ. դասակարգին մաս կազմող խումբերուն կատարած պոչթիին, որոնք ուշացուցին Բ. դասակարգի ախոյեանութեան 2003-2004 եղանակին սկսիլը: Անոնք դժգոհ էին ֆետերասիոնին այն որոշումէն, որ կ'ուզէր Բ. դասակարգին խումբերուն թիւը 20էն բարձրացնել 24ի:

2004-2005 եղանակէն սկսեալ Ա. դասակարգին մաս պիտի կազմեն 20 խումբեր, իսկ Բ. դասակարգին՝ 22 խումբեր:

Այս եղանակին աւարտին Բ. դասակարգին մաս կազմող հինգ խումբեր պիտի բարձրանան Ա. դասակարգ եւ երեք խումբեր Ա. դասակարգէն պիտի փոխադրուին Բ. դասակարգ: Բացի այս մէկէն վիլյօֆի մրցում մըն ալ տեղի պիտի ունենայ Բ. դասակարգի վեցերորդ դիրքը գրաւողին եւ Ա. դասակարգի վարէն չորրորդ դիրքը գրաւող խումբին միջեւ:

Ֆետերասիոնին եւ Բ. դասակարգի ակումբներուն միջեւ այս հարցը ի վերջոյ լուծուելէ ետք, ախոյեանութեան մրցումները այսօր կը գտնեն իրենց ընկալնուն ընթացքը: Յարդ տեղի ունեցած են միայն երկու մրցումներ:

● ԹՈՒՐԻՔԻՆՑ ֆուլբոլի ֆետերասիոնին պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ յառաջիկայ Հոկտեմբեր 11ին տեղի ունենալիք Թուրքիա - Անգլիա Եւրօ-2004ի մրցաշարքի գտումի վերջին մրցումին, որ տեղի պիտի ունենայ Ֆենեբապահչէի դաշտին վրայ, անգլիացի համակիրներուն պիտի արգիլուի դաշտ մուտք գործել, նոյնիսկ թէ անոնք այդ մրցումին տոմսը ապահոված են:

Անգլիոյ ֆուլբոլի ֆետերասիոնը, որ այս մրցումին որեւէ տոմսակ չէ գնած, իր համակիրներուն կը թելադրէ ըսելով, որ չմեկնին Թուրքիա, հոն հարցեր չստեղծելու համար: Իր համակիրներուն ոչ մարզավայել կեցուածքին եւ տեղի ունեցած խռովութիւններուն պատճառով, Անգլիա նոյնիսկ կ'ընայ դուրս դուրսի մրցաշարքէն:

Նշենք, թէ անցեալ Ապրիլին, Սանտըրլէնտի մէջ անոնց միջեւ տեղի ունեցած մրցումին, Անգլիա իր անկարգապահ համակիրներուն պատճառով 111 հազար ամերիկեան տոլար (70 հազար սթերլին) տուգանքի ենթարկուեցաւ Եւրօ Ի. Ի. Ա. ին կողմէ:

● ԵՆՈՒ. Ի. Ի. Ա. ին երէկ յայտնեց, թէ շարժանակի դիրքին իր սկսած հարցաքննութիւնը կը շարունակէ, իմանալու համար, թէ ի՞նչ տեղի ունեցաւ անցեալ Շարաթ օր Իտալիա - Կալէս (Եւրօ-2004ի գտումի մրցաշարք) մրցումին:

Կալէսի ֆուլբոլի ֆետերասիոնը Եուրօ Ի. Ի. Ա. ին ուղարկած իր բողոքագրին մէջ նշեց, թէ «Սան Սիրօ»ի մէջ տեղի ունեցած մրցումին, Իտալիոյ համակիրները գտնուած են անկարգապահ՝ իր համակիրներուն հանդէպ:

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

Աւստրիա - Չեխիա
Հոլանտա - Մոլտաւիա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

Շուէտ - Լարվիա
Հունգարիա - Լեհաստան

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

Սլովակիա - Լիթվանիա

ՍՏՈՐԵՒ՝ տարբեր խմբակներուն դասակարգումը.

Ս.Ի. ՍԻՐԵԱԿ

- Ֆրանսա
- Սլովենիա
- Իսրայէլ
- Կիպրոս
- Մալթա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Ռումանիա
- Դանիա
- Պոնտիա
- Նորվեկիա
- Լուքսամպուրկ

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Չեխիա
- Հոլանտա
- Աւստրիա
- Մոլտաւիա
- Պիլիպիններ

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Շուէտ
- Լարվիա
- Հունգարիա
- Լեհաստան
- Սան Մարինօ

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Գերմանիա
- Դանիա
- Սլովակիա
- Լիթվանիա
- Ֆարօ Կղզիներ

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Յունաստան
- Սպանիա
- Ուքրաինա
- Հայաստան
- Հիւս. Իրլանտա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Անգլիա
- Թուրքիա
- Սլովակիա
- Մակեդոնիա
- Լիխթենշթայն

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Պուլկարիա
- Խրուաթիա
- Պիլիպիններ
- Էսթոնիա
- Անտորրա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Իտալիա
- Կալէս
- Ֆինլանտա
- Սերպիա
- Ալբանիա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

- Չեխիա
- Ռումանիա
- Ալբի
- Սլովակիա
- Վրաստան

Գերմանիա - Իսլանտա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ
Յունաստան - Հիւսիսային Իրլանտա
Հայաստան - Սպանիա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

Իտալիա - Ալբանիա
Կալէս - Սերպիա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

Թուրքիա - Անգլիա
Լիխթենշթայն - Սլովակիա

Ք.Ի. ՍԻՐԵԱԿ

Ռումանիա - Վրաստան
Չեխիա - Ալբի

ՄՐՅ.	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ	
1. Ֆրանսա	7	7	0	0	26	2	21
2. Սլովենիա	7	4	1	2	13	10	13
3. Իսրայէլ	7	2	3	2	9	8	9
4. Կիպրոս	7	2	1	4	7	16	7
5. Մալթա	8	0	1	7	5	24	1

1. Ռումանիա	8	4	2	2	21	9	14
2. Դանիա	7	4	2	1	14	8	14
3. Պոնտիա	7	4	0	3	6	7	12
4. Նորվեկիա	7	3	2	2	8	5	11
5. Լուքսամպուրկ	7	0	0	7	0	20	0

1. Չեխիա	7	6	1	0	20	3	19
2. Հոլանտա	7	5	1	1	15	6	16
3. Աւստրիա	7	3	0	4	10	11	9
4. Մոլտաւիա	7	2	0	5	5	14	6
5. Պիլիպիններ	8	1	0	7	4	20	3

1. Շուէտ	7	5	2	0	19	2	17
2. Լարվիա	7	4	1	2	9	6	13
3. Հունգարիա	7	3	2	2	14	7	11
4. Լեհաստան	7	3	1	3	9	6	10
5. Սան Մարինօ	8	0	0	8	0	30	0

1. Գերմանիա	7	4	3	0	10	4	15
2. Դանիա	7	4	1	2	11	6	13
3. Սլովակիա	7	3	2	2	11	8	11
4. Լիթվանիա	7	3	1	3	7	10	10
5. Ֆարօ Կղզիներ	8	0	1	7	7	18	1

1. Անգլիա	7	6	1	0	14	5	19
2. Թուրքիա	7	6	0	1	17	5	18
3. Սլովակիա	7	2	1	4	9	9	7
4. Մակեդոնիա	8	1	3	4	11	14	6
5. Լիխթենշթայն	7	0	1	6	2	20	1

1. Պուլկարիա	7	5	2	0	13	3	17
2. Խրուաթիա	7	4	1	2	11	4	13
3. Պիլիպիններ	7	4	1	2	9	9	13
4. Էսթոնիա	7	2	2	3	4	4	8
5. Անտորրա	8	0	0	8	1	18	0

1. Իտալիա	7	4	2	1	13	4	14
2. Կալէս	7	4	1	2	11	7	13
3. Ֆինլանտա	8	3	1	4	9	10	10
4. Սերպիա	7	2	3	2	8	9	9
5. Ալբանիա	7	1	1	5	5	16	4

1. Չեխիա	7	3	3	1	13	11	12
2. Ռումանիա	7	3	2	2	16	11	11
3. Ալբի	7	3	2	2	10	9	11
4. Սլովակիա	8	2	2	4	11	15	8
5. Վրաստան	7	2	1	4	7	11	7

Ս. ԽԱՉԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՆԱՆԴԵՍ

Կերպ
ՃՕ ԱԹԱՔԵԱՆ

Ընկերակցութեամբ՝
ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻ

ԱՆՏԱՆՕԹԻ ՄԸ ԿՈՂՄԵ ԴԱՇՈՒՆԱՀԱՐՈՒԵԼ ԵՏՔ

ԻՐԱՔԻ ՄԵՉՄԱԿԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ ԳԾՈՎ

ՉԻՆԱՍՏԱՆ ՄԻԱՑԱԲ ՖՐԱՆՍԱՅԻ, ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ



Ամերիկացի զինուորային իրաքի մէջ կը յարգեն յիշատակը 11 Սեպտեմբերի զոհերուն

Չինաստան ձայնակցեցաւ Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Ռուսիոյ, որոնք առաջարկած են Իրաքի մէջ քաղաքական դերակատարութիւն տալ ՄԱԿի, խոստանալով օժանդակել Իրաքի մէջ կայունութիւնն ու կարգն ու կանոնը վերահաստատելու աշխատանքին:

Չինաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Քոնկ Քուան ըսաւ, որ Պէյճինկ կ'ուսումնասիրէ ամերիկեան բանաձեւի առաջարկը, որուն գծով տակաւին որոշում չէ տուած: Բանբերը աւելցուց սակայն, որ Պէյճինկ զօրավիզ կը կանգնի Ֆրանսական, ռուսական եւ գերմանական առաջարկներուն: Քոնկ ըսաւ նաեւ, որ Չինաստան անհրաժեշտ կը նկատէ Ապահովութեան խորհուրդի նոր բանաձեւ մը, որ պէտք է նպաստէ Իրաքի մէջ կացութեան եւ գերիշխանութեան վերահաստատման:

Ֆրանսական-գերմանական միացեալ առաջարկ մը եւ ռուսական անկախ առաջարկ մը ներկայացուած են ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի: Ֆրանսա եւ Գերմանիա կը պահանջեն, որ Միացեալ Նահանգներ կեդրոնական դերակատարութիւն տան ՄԱԿի իրաքի վերակառուցման գործընթացին մէջ: Ֆրանսեւ գերմանական առաջարկին նպատակն է բարեփոխել ամերիկեան առաջարկը, որ կ'ուզէ բազմազգեան ուժ հաստատել Իրաքի մէջ՝ ՄԱԿի հովանաւորութեամբ: Ռուսիա եւս կը պահանջէ, որ ՄԱԿի դերակատարութիւնը մեծ ըլլայ: Երկու առաջարկներն ալ կը պահանջեն, որ Իրաքի վերաշինութեան տրամադրուելիք ֆինանսները ըլլան յստակ ու թափանցիկ:

Ուաշինկթըն իր կարգին յայտնեց, որ Ռուսիա շինիչ կեցուածք մը որդեգրած է ամերիկեան առաջարկին հանդէպ եւ թէ Ֆրանսա եւ Գերմանիա ալ դէմ չեն այդ առաջարկին: Արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ հետաձգանքային հաղորդակցութիւն մը ունեցաւ ռուս պաշտօնակիցին՝ իկոր Իվանովի հետ: Նախարարութեան մէկ րանբերը ըսաւ, որ Փաուըլ - Իվանով երկխոսութիւնը բաւական շինիչ է ու արդիւնաւէտ: (ԱՅՓ)

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԶՅԱԶՈՂԵՑԱՆ ՇՐՋԱՊԱՏԵԼ ԻՐԱՆԸ Կ'ԸՍԵ ՈԱՖՍԱՆՃԱՆԻ

ԹԵՀՐԱՆ, 11 (ԱՅՓ).- Իրանի նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանճանի Միացեալ Նահանգները կ'ամբաստանէ Իրանը չըլապատելու փորձեր կատարելու յանցանքով: Ռաֆսանճանի ըսաւ, որ Ուաշինկթըն չըլան ներխուժելով փորձած է չըլապատել Իրանը, սակայն չէ յաջողած, որովհետեւ Իրանականութիւնը այն է, թէ Միացեալ Նահանգներ «չըլապատուած են» Իրանով, հաղորդեց «ԻՐՆԱ» լրատու գործակալութիւնը:



Ռաֆսանճանի ըսաւ նաեւ, որ Իրաքը ներխուժած ամերիկացիները անելի մատնուած են: Եթէ պիտի անդրադառնան, թէ Իրանի նախկին նախագահն անհրաժեշտ է իրանի կորսնցնեն իրենց արժանապատուութիւնը: Ան աւելցուց, որ ըլլայ վիթխանութիւնն աւելի շուտով ամերիկացիները գէշ անէ՞ք մը», շեշտեց Ռաֆսանճանի:

ՇՈՒԷՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ ԼԻՆՏ ՄԱՀԱՑԱԲ

Շուէտի արտաքին գործոց նախարար Աննա Լինտ, որ երկրին մէջ ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող քաղաքական անձնաւորութիւններէն մէկն էր, երէկ առաւօտուն մահացած է, նախանցեալ գիշեր անձանօթի մը կողմէ դաշուհարուելէ ետք, ցնցելով երկրը, որ կը պատրաստուի երոյրորդեգրումին գծով բանալի հանրաքուէի մը:



Բժիշկներ ամէն ճիգ ի գործ դրած են Չորեքշաբթի գիշեր փրկելու համար Լինտի կեանքը, սակայն ան մահացած է ներքին շատ մեծ արիւնահոսութեան հետեւանքով, որ տեղի ունեցած է վնասուած լեարդին պատճառով, ըսած են «Քարոլինսքա» հիւանդանոցին պատասխանատուները: Ան դաշուհարուել է թեւէն, փորէն ու կուրծքէն:

Վարչապետ Երան Փերսոն չափազանց յուզուած թղթակիցներու յայտնած է, թէ Լինտի մահը «անիրական կը թուի. շատ դժուար է իսկապէս ըմբռնել պատահածը»:

Աւելի ուշ ան ըսած է, թէ հանրաքուէն ծրագրուածին նման կիրակի օր տեղի պիտի ունենայ:

Մինչ Եւրոպայի տարածքին գովասանքի եւ ցաւակցութեան պատգամներ կ'ուղղուէին, հազարաւոր ցնցուած շուէտացիներ կը հաւաքուէին Սթոքհոլմի զանազան վայրերու մէջ, որոնց կարգին «Էն. Քէյ» վաճառատներու համալիրին մէջ, ուր Լինտ, որ երկու զաւակ ունէր, յարձակումի ենթարկուած է գնումի ընթացքին:

Շուէտի ոստիկանութիւնը թափ տուած է մարդասպանին հետապնդումներուն: Կասկածելին կը նկարագրուէ իրբեւ բարձրահասակ անձ մը, գինուորական բաճկոնով «պէյձապոլ» զիլարովով:

46 տարեկան Լինտ, եւրոյի գծով հանրաքուէին «այո» բռնէր համար արշաւ կը տանէր: Հաւանական կը նկատուէր, թէ ան կ'ընայ Փերսոնին յաջորդել իրբեւ վարչապետ:

Լինտի վրայ յարձակումը շուէտացիներուն յիշեցուց նախկին վարչապետ Օլաֆ Փալմէի 1986ի ահարկէութիւնը, մինչ ան Սթոքհոլմի շարժապատկերի մէկ սրահէն դուրս կու գար:

Անիկա նաեւ վերահրահարած է այն բանալիներ, թէ շուէտացի բարձրաստիճան քաղաքական անձնաւորութիւնները լաւ պաշտպանուած են: Լինտի թիկնապահ չէր ընկերակցեր:

Շուէտի իշխող Ընկերվար ժողովրդավար Կուսակցութեան մէկ անդամը՝ Լինտ, արտաքին գործոց նախարար դարձած է 1998ին:

ՅԱՒԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընկերվար Միջազգայնականը երէկ իր ցնցումը եւ ցաւակցութիւնը յայտնած է Լինտի սպանութեան համար:

Եւրոպական Միութեան ղեկավարները գովասանքով արտայայտուած են Լինտի մասին, զայն քաղաքական «ջերմ» անձնաւորութիւն մը եւ «իսկական եւրոպացի մը» կոչելով:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան նոյնպէս ցնցում եւ ցաւ արտայայտած է, գովասանքով խօսելով ՄԱԿի «մէկ սերտ բարեկամին մասին»:

Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք, Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռլաք Ֆիշլըր, ինչպէս նաեւ Յունաստանի եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարները ցաւ արտայայտած են:

(ԱՅՓ)

ԻՐԱՔԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԿԱՐՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅ

ԲՐԻՏԱՆԻՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԳԱՂՏՆԻ ՊԱՀԱԾ Է ՈՐՈՇ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 11 (ԱՅՓ).- Բրիտանիոյ զաղտնի սպասարկութեան ցործակալութիւններուն հսկող Խորհուրդը յարապարակեց, որ «նախաձեռն» է, որովհետեւ պաշտպանութեան նախարար Ճէֆ Հուն ամբողջական մանրամասնութիւններ չէ փոխանցած գործակալութիւններուն յայտնած մտահոգութիւններուն մասին, որոնք կ'առնչուին Իրաքի գէնթերու սպանութիւններէն գծով անցեալ Սեպտեմբերին հրապարակուած տեղեկագիրին: Ապահովութեան խորհուրդին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ պաշտպանութեան նախարարութեան որդեգրած կեցուածքը «օգտակար չէր» եւ «սխալ ուղղութեան վրայ» դրած է հանրային կարծիքը:

Խորհուրդին բանբերը շեշտեց սակայն, որ Հուն չէ ստած, այլ գոյութիւն ունեցող մտահոգութիւններ չէ փոխանցած: Ընդդիմադիր պահպանողական ճակատը անմիջապէս հակադարձեց պահանջելով Հունի հրաժարականը:

Խորհուրդը նշեց նաեւ, որ Սեպտեմբերի տեղեկագիրին մէջ չափազանցուած տեղեկութիւններ չէր աւելցուած վարչապետ Պլէրի կառավարութեան կողմէ: Խորհուրդը քննադատեց սակայն «45 վայրկեանի» սպանալիք ներառուած տեղեկագիրին մէջ, ուր չորս անգամ նշուած էր, թէ Սատտամ Հիւսէյն 45 վայրկեանէն կ'ընայ արձակել հաւաքական քանդուածի հրթիռներ: Խորհուրդը նշեց, որ «45 վայրկեանի» պարագան յստակ ու ճիշդ ձեւով չէր ներկայացուած:

Մասնագիտութիւնը ՈՍԿԷ ԱՊԱՐԱՆՋԱԴ Է ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ
դիմացդ կը բանայ

Ա.- Համակարգիչի ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ԵՒ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ մասնագիտութիւնը, ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ:

Բ.- Ոսկերչութեան ու կաղապարաշինութեան վարպետ ըլլալու համար, տարիներ եւ շատ ճիգ է պէտք:

ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ ամենակարճ ճամբան է այդ նպատակին հասնելու, առաւել՝ վկայեալ վարպետ ըլլալու համար: Արձանագրութիւն՝ ամէն օր

ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ - Տորա՝ հեռ. 01/251320

ՊԱԼԹԱՍԱՐ ԿԱՐՍՈՆ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ԹԱՅՄԻՐ ԱԼԼՈՒՆԻԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ



Թայսիր

ՄԱՏԻՏ, 11 (ԱՅՓ).- Սպանացի դատաւոր մը որոշեց արգելափակուած պահել «Ժայիրա» պատկերասրահը:

«Ժայիրա» սրահը պատկերասրահ էր Թայսիր Ալլունիին, որ կ'ամբաստանուէր «Քալիտա» ի հետ կապեր ունենալու յանցանքով: Ալլունիի ձերբակալուած էր անցեալ Ուրբաթ օր Կրասնատայի մէջ, ուրկէ փոխադրուած է Մատրիտ: Սպանական օրէնքին համաձայն՝ դատաւորը Պալթասար Կարսոն մինչեւ «Ինքզայք» օր (երէկ) պայմանաւորուէր որոշելու համար, թէ բաւարար փաստ կա՞յ Ալլունիին ձերբակալուած պահելու, այլապէս թղթակիցը ապատ պէտք էր արձակուէր:

Ալլունիի փաստաբանը պարմանք յայտնեց, դիտել տալով, որ առնուապայումս արձակուած պատարձակուած կ'ակնկալէր: Իսկ «Ժայիրա» յայտարարեց, որ այս որոշումը յուսախարութեան է աւելի է եւ թէ հետեւանքներ պիտի ունենայ, յատկապէս՝ արաբական երկիրներու մէջ բողոքի ցոյցերով եւ այլ միջոցառումներով:

ՓԱԼՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՀԱՐՅԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՅՆԵ ՄԱԿԻ ՄԵՉ ԷՋ 5

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

• Over Bed Table
• All Kinds Of Oxygen
We Also Provide
• Laboratory service.
• Physiotherapist
• Nurses Aids
• P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍԱՐԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՈՐԸ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅԾԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԵՆՆ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... ... OR WHERE YOU NEED.